ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ

ՀՀ ԱՆ Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի և ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերի համատեղ ծրագրի միջև կնքած դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվող ‹‹ՄԻԱՎ վարակ›› թեմայով դասընթացի դասընթացավար-համաճարակաբանի ընտրության մրցույթ:

Պաշտոնի անվանում՝ Դասընթացավար-համաճարակաբան

Վայր՝ Երևան, ՀՀ

Բացման օր՝ փետրվարի 14, 2020թ.

Դիմումների ներկայացման վերջնաժամկետ՝ փետրվարի 21, 2020թ.

Մեկնարկ՝ հնարավորինս շուտ

Աշխատավարձ՝ մրցակցային

Դիմելու ընթացակարգ՝

Բոլոր հետաքրքրված թեկնածուները պետք է իրենց ինքնակենսագրականները (CVs) ուղարկեն հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ info@nih.am

Նամակի վերնագրում խնդրում ենք նշել՝ ‹‹ՄԻԱՎ վարակ թեմայով դասընթացավար››: Ընտրված թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի (5 աշխատանքային օրվա ընթացքում):

Աշխատանքի նկարագիր և պարտականություններ՝

Դասընթացավարի պարտականություններն են՝ միջին և ավագ բուժաշխատողների համար նախատեսված ‹‹ՄԻԱՎ վարակ›› թեմայով դասընթացի և ԱԱՊ բժշկական հաստատությունների բուժաշխատողների համար «ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության հմտությունների զարգացում» սեմինար-վարժանքի համաճարակաբանությանը վերաբերվող բաժինների դասավանդումը, մասնավորապես՝

- Մասնակցություն ‹‹ՄԻԱՎ վարակ›› թեմայով և ԱԱՊ բժշկական հաստատությունների բուժաշխատողների համար «ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության հմտությունների զարգացում» սեմինար-վարժանքի ուսումնական ծրագրերի (պլան, գրաֆիկ, նյութ) մշակմանը:
- Մասնակցություն ծրագրի համակարգողի հետ ուսումնական ծրագրերի նախագծերի քննարկմանը և կազմմանը:
- Բանավոր ներկայացումների, ուսումնամեթոդական նյութերի պատրաստում, պարբերաբար թարմացում և ներկայացում գիտական ղեկավարին դիտարկման ու վերջնականացման համար:
- Ուսումնական ծրագրերին համապատասխան դասախոսությունների, գործնական և սեմինար պարապմունքների վարում (խմբում մասնակիցների քանակը՝ 20-25 հոգի):

- Ունկնդիրների հետ պարբերաբար քննարկումների, բանավոր հարցումների ացկացում դասավանդման գործընթացի բարելավման նպատակով:
- Ունկնդիրների շրջանում նախադասընթացային և հետդասընթացային հարցումների հարցաթերթիկների մշակում և կազմակերպում:
- Ունկնդիրների շրջանում անցկացվող նախադասընթացային և հետդասընթացային հարցումների արդյունքների վերլուծություն, արդյունքների ներկայացում հաշվետվության տեսքով:
- Դասախոսներին դասընթացը վարելու համար կտրամադրվեն մասնագիտական կրեդիտներ:
- Մասնակցություն ուսումնական խորհրդակցությունների՝ ըստ անհրաժեշտության:
- Հաշվետվություն իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության ներկայացում՝ նշելով դասավանդման ժամերը:

Պահանջվող որակավորումներ՝

- Բարձրագույն բժշկական կրթություն, համաճարակաբան
- Առնվազն 3 տարվա մասնագիտական փորձ:
- Դասավանդելու կամ կրթական ծրագրերում աշխատանքային փորձը ցանկալի է:
- Հայերեն լեզվի գերազանց իմացություն, բանավոր խոսքի գերազանց տիրապետում:
- MS Office-ի իմացություն: